

Օրակարգ

1. ԵՊՀ ռեկտորի ժ/պ Հ.Հովհաննիսյանի այցը ԵԼՀ ֆակուլտետ:
2. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստին ներկա էին 36 անդամներից 26-ը : ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց ԵՊՀ ռեկտորի ժ/պ Հ.Հովհաննիսյանին և գործընկերներին:Գ.Բարսեղյանը ասաց, որ ԵՊՀ ռեկտորի ժ/պ-ն ձեռնարկել է հանդիպումներ տարբեր ֆակուլտետների հետ՝ ավելի հանգամանալից ներկայացնելու իր ծրագիրը և ծանոթանալու ֆակուլտետներում առկա խնդիրներին : Հ.Հովհաննիսյանը կիսվեց իր պատկերացումների ու անելիքի մասին , որը ձևավորվել է մեկ և կես ամիսների շրջանակում :Նա կարևորեց համալսարանում տիրող հանգիստ մթնոլորտը, որը նպաստում է ուսումնական որակի բարելավմանը և գիտահետազոտական գործընթացների խթանմանը : Իր խոսքում նա նշեց, որ առավել կարևորում է պրոֆեսորադասախոսական կազմի պրոֆեսիոնալիզմը, քան նրանց քաղաքական հայացքները :Նա կարևորեց նաև այն հանգամանքը, որ մոտ ժամանակներում համալսարանականներին ներկայացվելու են առողջապահական նոր փաթեթներ, որոնք իրենց մեջ շատ ավելի մեծ հնարավորություններ կպարունակեն : Չափազանց մեծ կարևորություն է տրվելու համալսարանի գիտահետազոտական դաշտին, որպեսզի բարձրացվի համալսարանի տեսանելիությունը միջազգային մակարդակով : SWAT -ի միջոցով վեր են լուծվում այն թերացումներն ու բացթողումները, որոնք պետք է վերափոխել ու բարելավել : Դա էլ իր հերթին նշանակում է, որ համալսարանականները պետք է ավելի ակտիվ լինեն միջազգային ամսագրերում հոդվածներ տպելու հարցում, ինչն էլ, ինքնըստինքյան, ավելի կբարձրացնի համալսարանի վարկանիշը և ԵՊՀ-ի տեսանելիությունը միջազգային հարթակներում : Նա ասաց, որ արդեն զբաղվում են Հնդկաստանից ուսանողներ հավաքագրելու գործընթացով, նշեց նաև՝ ֆարմացիայի ինստիտուտի հետ կապված ակնկալվող բարեփոխումները, որոնք համալսարանին օգուտ և ավելի մեծ հնարավորություններ ու ճանաչում են բերելու : Նա հավելեց, որ պետք է զբաղվեն ԵՊՀ -ի հանգստյան տների խնդիրներով, ինչպես նաև ներկայացրեց համալսարանի ներկայիս ֆինանսական վիճակը և սպասվելիք անելիքները : Համալսարանականներին սպասվում են նաև միջավայրային փոփոխություններ՝ սկսած կանաչ տարածքների ձևավորումից մինչև տարբեր հագեցվածությամբ լսարանների ապահովումը : Վերանորոգման աշխատանքներ են սպասվում ֆիզիկայի ֆակուլտետին, որը, նրա խոսքով, ԵՊՀ-ի քաշող ուժն է : Հ.Հովհաննիսյանը ասաց, որ ծրագիրը ավելի մանրամասն կներկայացնի կապված կրեդիտային համակարգի, կրեդիտի փոխանցելիության և այլ կարևոր հարցերի քննարկման հետ : Պարոն

Հ.Հովհաննիսյանը կարևորեց այն հանգամանքը, որը ԵՊՀ-ն պետք է ունենա անձեռնամխելի կապիտալ, ինչը ավելի կնպաստի ԵՊՀ-ի ֆինանսական հարցերի տնօրինմանը և այլ ֆինանսական գործընթացների ավելի արդյունավետ իրագործմանը : Նրա խոսքով դասախոսները պարտավոր են ուսանողներին ապահովել բոլոր նյութերով e-learning հարթակում : Նրա կարծիքով բակալավրիատի ծրագիրը կարող է տևել 3 տարի, մագիստրոսական ծրագիրը կարող է կրճատվել և դառնալ 1 կամ 1,5 տարի : Հ.Հովհաննիսյանը անդրադարձավ ուսանողի կերպարին ու առաջադիմությանն առնչվող հարցերին : Նրա խոսքով ԵՊՀ-ն պետք է ունենա պարկեշտ ուսանողներ և, այս առումով, նա նշեց, որ ուսանողների ոչ պարկեշտ վարքը և վատ առաջադիմությունը պետք է հանգեցնի ուսանողի՝ ԵՊՀ-ից հեռացման գործընթացին : Նա պատրաստել էր նաև մի սլայդ, որտեղ համակարգված ձևով ներգրավել էր ԵԼՀ ֆակուլտետի անձնակազմին, նրանց կողմից իրականացված գիտական հոդվածների քանակին, այդ թվում՝ միջազգային ամսագրերում ներառված, ամբիոնների կառուցվածքին՝ ըստ գիտական աստիճանների, գիտական գործունեության արդյունքների : Նա ասաց, որ վարչությունների և աշխատակիցների գործունեությունը պետք է վերանայվի՝ ավելի համակարգված դարձնելու ակնկալիքով : Կիրախուսվեն դասախոսները գրանտային ծրագրերի միջոցով : Խոսեց նաև Կիևյան փողոցում գտնվող շենքերից մեկի մասին, որը եղել է ԵՊՀ հանգստյան տուն և հույս հասնեց, որ մոտակա ժամանակամիջոցում կկարողանան միասնական ուժերով վերականգնել շենքը և հետագայում հիմնադրել STEM դպրոց : Անդրադարձ կատարվեց նաև Ծաղկաձորի հանգստյան տանը, որտեղ պետք է լողավազան կառուցվի , որից գինը մի փոքր կբարձրանա, բայց ընդհանուր առումով կպահպանի որակի չափանիշը : Նիստի ընթացքում հնչեցին նաև ներկաներին հուզող հարցեր : Հ.Հովհաննիսյանը ի պատասխան Ա.Մելքոնյանի հարցին, թե ինչպես պետք է լուծվի այն հակասությունը՝ թեկնածու, դոցենտի, դոկտորի աստիճանի հետ կապված /ըստ 1992 թվականին ԱՊՀ երկրների շրջանակում Քիշնուում համաձայնագրի ստորագրման արդյունքում/, պետք է արդյոք պահպանվեն նշված աստիճանները՝ պարոն Հովհաննիսյանը պատասխանեց, որ այդ պարտավորությունը պետությունը ստանձնել է իր վրա և ամեն տարի որոշակի փոփոխություններ և հստակեցումներ են կատարվում այդ ոլորտում : Ֆրանսիական բանասիրության ամբիոնի դոցենտ Գ.Սարգսյանը մտավախություն հայտնեց մեծ խմբի առկայության հանգամաքից, որին, ի պատասխան Հ.Հովհաննիսյանը ասաց, որ փոփոխություններ սպասվում են, խնդիրը կապված է ֆինանսների հետ և խորհուրդ տվեց՝ սպասել և զինվել համբերությամբ : Նա հավելեց, որ պետք է ավելի ճիշտ օգտագործել ուսանողների ներուժը ի նպաստ համալսարանի : Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ.Ապրեսյանը ողջունեց Հ.Հովհաննիսյանին և ասաց, որ տպավորված է նրա ելույթով : Նա ասաց, որ իրազեկված է, որ ռեկտորը տիրապետում է լեզուների , ինչը շատ կարևոր է ժամանակակից

աշխարհում: Մ. Ապրեսյանը ցանկացավ իմանալ, թե պարոն ռեկտորը առաջիկայում ինչ պլաններ ունի ԵԼՀ ֆակուլտետի հետ: Հ.Հովհաննիսյանը հաստատեց, որ տիրապետում է մի քանի լեզուների և առավել կարևորում է լեզուների իմացությունը մասնագիտության ընտրության հարցում: Նա հավելեց, որ դասավանդել է տարբեր համալսարաններում, շատ երկրներում մասնակցել է շատ ծրագրերի, ինչը առանց լեզուների իմացության հնարավոր չէր լինի իրականացնել: Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Ջ.Հարությունյանը իր խոսքում նշեց, որ քանի որ համալսարանը որդեգրել է ուսանողակենտրոն ու մարդակենտրոն մոտեցում, նա խնդրեց, որ բազմավաստակ դասախոսների նկատմամբ ուշադրություն ու հարգանք ցուցաբերվի, և փաստեց, որ իր ամբիոնի որոշ բազմավաստակ դասախոսներ անտեսվեցին համալսարանի 100-ամյանի շեմին և հեռացվեցին համալսարանից: Նա հույս հայտնեց, որ ռեկտորի նախաձեռնությամբ այդ դասախոսները մի օր կհրավիրվեն մայր բուհ և իրենց արժանի ձևով կմեծարվեն: Երկրորդ առաջարկը այն էր, որ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել ֆրանկոֆոնիայի շրջանակներում ֆրանսերեն լեզվի տարածմանն ու խթանմանը: Նա առաջարկեց նաև, որ միայն լավագույն ուսանողները գրեն ավարտական աշխատանքներ, իսկ թույլ ուսանողները հանձնեն պետական քննություն: Հ.Հովհաննիսյանը խոսացավ սրտացավ մոտեցում ցուցաբերել բարձրացված հարցերին և լուծումներ տալ խնդիրներին: Նա շատ հարցերին էլ չանդրադարձավ ժամանակի սղության պատճառով՝ հավելելով, որ դեկանի հաշվետվության ժամանակ ավելի շատ հնարավորություն կունենա հարցի ու պատասխանի միջոցով ավելի հանգամանալից կերպով անդրադառնալու ու լսելու ֆակուլտետին հուզող հարցերին:

ԵԼՀ Ֆակուլտետի դեկանը շնորհակալություն հայտնեց Հ. Հովհաննիսյանին հանգամանալից ելույթի համար:

ԵԼՀ ֆակուլտետի

դեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դալայան

05.10.2021թ